Կոռուպցիայի ընկալման համաթիվ. մեթոդաբանության համառոտ նկարագրություն

Կոռուպցիայի ընկալման համաթիվը (ԿԸՀ) համախմբում է մի շարք տարբեր աղբյուրներից վերցված տվյալները, որոնք վեր են հանում գործարարների և տվյալ երկրների գծով փորձագետների ընկալումներն այդ երկրի հանրային ոլորտում կոռուպցիայի մակարդակի վերաբերյալ:

ԿԸՀ-ն հաշվարկելու համար կատարվում են հետևյալ քայլերը.

1. **Ընտրել տվյալների աղբյուրները.** վավեր համարվելու համար տվյալների յուրաքանչյուր աղբյուր, որն օգտագործվում է ԿԸՀ-ի հաշվարկման համար, պետք է բավարարի հետևյալ չափանիշներին՝
    - քանակականացնի հանրային ոլորտում կոռուպցիայի ընկալումը,
    - հիմնված լինի հուսալի և վավեր մեթոդաբանության վրա, որը մեծ թվով երկրների ԿԸՀ արժեքները և նրանց դասակարգումը ներկայացնում է միևնույն սանդղակի վրա,
    - իրականացված լինի վստահելի կազմակերպության/կառույցի կողմից,
    - հնարավորություն տա տարբերակել երկրներն իրարից՝ ըստ իրենց ԿԸՀ արժեքների,
    - գնահատի զգալի թվով երկրներ,
    - գնահատումը կատարվի տվյալ երկրի հարցերով կամ այդ երկրի փորձագետի, կամ այդ երկրի գործարարի, կամ էլ այդ երկրի հետ առնչվող այլ երկրի գործարարի կողմից,
    - կազմակերպությունը/կառույցը կրկնում է իր ուսումնասիրությունը առնվազն երկու տարին մեկ հաճախականությամբ:

ԿԸՀ-ն հաշվարկվում է՝ օգտագործելով 12 տարբեր կազմակերպությունների/կառույցների տվյալների 13 տարբեր աղբյուրներ, որոնք չափում են կոռուպցիայի ընկալումը նախորդ երկու տարիների ժամանակահատվածում: Այս աղբյուրները մանրամասն կերպով նկարագրված են ԿԸՀ-ն հաշվարկելու համար օգտագործված աղբյուրների նկարագրության փաստաթղթում:

2. **Ստանդարտացնել տվյալների աղբյուրները** 0-ից 100 սանդղակի վրա, որտեղ 0-ն ընկալված կոռուպցիայի ամենաբարձր, իսկ 100-ը՝ ամենացածր մակարդակն է: Այս ստանդարտացումը կատարվում է՝ հանելով ելակետային տարում (2012 թ.) յուրաքանչյուր աղբյուրի միջին արժեքը յուրաքանչյուր երկրի դեպքում տվյալ տարում այդ աղբյուրի արժեքից, ապա բաժանելով այն ելակետային տարում այդ աղբյուրի ստանդարտ շեղումի վրա: Ելակետային տարվա նշված պարամետրերի կիրառումով այս հանումն ու բաժանումն ապահովում է ԿԸՀ արժեքների համեմատելիությունը՝ սկսած ելակետային 2012 թվականից: Այս գործողությունից հետո ստանդարտացված արժեքները համապատասխանեցվում (տրանսֆորմացվում) են ԿԸՀ սանդղակին՝ բազմապատկելով այն ԿԸՀ 2012 թ. ստանդարտ շեղման արժեքի (20) վրա և այնուհետև գումարելով դրան ԿԸՀ այդ նույն՝ 2012թ. միջին արժեքը (45): Դրանով տվյալների բազմությունը համապատասխանեցվում է ԿԸՀ 0-ից 100 սանդղակին:

3. **Հաշվարկել միջինը.** որպեսզի տվյալ երկիրը կամ տարածքն ընդգրկվի ԿԸՀ դասակարգման աղյուսակում, այդ երկիրը պետք է գնահատվի առնվազն երեք աղբյուրների կողմից: Տվյալ երկրի ԿԸՀ արժեքը հավասար է այդ երկրի ԿԸՀ-ն չափելու համար օգտագործված բոլոր աղբյուրների ստանդարտացված արժեքների միջին թվաբանականին: Ստացված արժեքն այնուհետև կլորացվում է ամբողջ թվերի:

4. **Նշել անորոշության աստիճանը.** ԿԸՀ արժեքի հետ միասին ներկայացվում է նաև նրա ստանդարտ սխալը և վստահության միջակայքը, որոնք արտացոլում են տվյալ երկրի/տարածքի ԿԸՀ արժեքը հաշվարկելու համար օգտագործված աղբյուրների արժեքների միջև տարբերությունները: